

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՄԾԶԲ-20-4/2-1**

ք. Երևան

«29» 03 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յուզյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՋԻԷՆՋԻԵՅ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 15700000 (տասնհինգ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝

**ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ**, որտեղ՝

**ՎԳ**-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

**ՄԳ**-ն ընտրված մասնակցի առաջարկված հանրագումարային գինն է:

**1**-ին չափաբաժնի համար՝ 8,470,540 ՀՀ դրամ,

**ՆԳ**-ն ծառայության մատուցման համար սահմանված միավոր գների հանրագումարն է:

**1**-ին չափաբաժնի համար՝ 11,011,707 ՀՀ դրամ,

**Ծ**-ն մատուցված ծառայության միավորի գինն է:

**Ք**-ն մատուցված ծառայության քանակն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով<sup>1</sup>: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱժՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի

<sup>1</sup> Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրաննման պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 27 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը

ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:<sup>2</sup>

7.14 Սույն պայմանագրով նախատեսված<sup>3</sup> Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՁՈ սպառազինության վարչությունը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն  
ՀՀ, ք. Երևան Բազրևանդի 5  
ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն  
Հ/հ 900011144079  
ՀՎՀՀ 02522157

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ



Ն. ՅՈՂԶՅԱՆ


**ՎԱՃԱՌՈՂ**

«ՋԻԷՆՋԻԵՅ ԳՐՈՒՊ» ՓԲԸ  
ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 119/12  
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ  
Հ/Հ 220563330384000  
ՀՎՀՀ 01271541

Տնօրեն



Ա. ԳԱՊԱՐՅԱՆ



<sup>2</sup>Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*  
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

- Կատարողի կողմից պետք է տրվի երաշխիք փոխարինված պահեստամասերի համար 6 ամիս կամ 10000կմ:
- Հիմնական նորոգում անցած ազդեցատների(շարժիչ,փոխանցումների տուփ, բաժանարար տուփ,կամրջակներ) շահագործման երաշխիքային ժամկետը՝ 12 ամիս կամ 50000 կմ:
- Ծառայությունը մատուցվում է ըստ հայտերի: Հայտի թույլտվությունը ՀՀ ՁՈՒ ՍՎ ավտոմոբիլայի ծառայության կողմից էլեկտրոնային տարբերակով տրվում է ծառայությունը մատուցողին:  
Առանձին դեպքերում ՀՀ ՁՈՒ ՍՎ ավտոմոբիլայի ծառայության կողմից կարող է տրվել բանավոր թույլտվություն , որը պետք է հետագայում ձևակերպել գրավոր ձևով: Մինչև սպասարկելն ու նորոգելը ծառայությունը մատուցողի և 14746 զորամասի ներկայացուցչի կողմից կազմել արատավորման նախնական զննման ակտ կազմակերպության տնօրենի, վարորդի, ՀՀ ՊՆ 14746 զորամասի ներկայացուցչի և ՀՀ ՊՆ 14746 զորամասի հրամանատարի ստորագրությամբ և կնիքով, որից հետո երեք օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ ՁՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայություն:
- Ծառայությունը պետք է մատուցվի (մեքենան նորոգվի)մեքենան նորոգման հանձնելու պահից 7 օր ներառյալ արատավորման աշխատանքները, որից հետո կազմել կատարողական ակտ վերոնշյալ անձանց ստորագրություններով, կնիքով և ներկայացնել ՀՀ ՁՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայություն: Չորքերից նորոգման ենթակա տեխնիկայի փաստաթղթերը ստորագրվում է նաև զորքերի ներկայացուցչի կողմից:
- Ծառայության մատուցման ընթացքում օգտագործվող բոլոր տեսակի պահեստամասերի, քայլուղերի, ներկերի և այլ նյութերի ապահովումն իրականացվում է ծառայությունը մատուցողի կողմից:
- Մինչեքոչ յուրի շահագործման նվազագույն վազքը ոչ պակաս 6000 կմ.
- Մինչեքոչ յուրի շահագործման նվազագույն վազքը ոչ պակաս 10000 կմ.
- Կիսասինթետիկ յուրի շահագործման նվազագույն վազքը ոչ պակաս 8000 կմ.
- Փոխարինված ազդեցատները և պահեստամասերը պետք է հանձնվեն ՀՀ ՊՆ 14746 զորամաս (ընդունումը և տեղափոխումը զորամասի ուժերով):

**ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

Ծառայության				
Ը/Ը	Զ/Կ	անվանումը	Ընդհանուր առավելագույն գումարը (ՀՀ դրամ)	Մատուցման ժամանակացույց
1	1	ՈՒԱԶ-315195 ինժ. և մոդիֆիկացյաները	15700000	Ծառայությունների մատուցումը կիրականացվի 2020թ. համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման> կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի /ը/ պարբերության պահանջները:

**Մեծ ծավալի պարզաձուլ ապրանքների և ծառայությունների միավորի գները ներկայացված են կից Հավելված 1-ով:**

**ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

ՀՀ դրամ

Գնման առարկայի				
Ը/Ը	Զ/Կ	անվանումը	ԸՄՎ կողը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, ընդ որում՝ Նախատեսվում է ֆինանսավորել պայմանագրի կատարման համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ կնքվելիք համաձայնագրերով սահմանված վճարման ժամանակացույցով:
1	1	ՈՒԱԶ-315195 ինժ. և մոդիֆիկացյաները	50111130/ 529/9/1	

ՓԵՐՈՂ  
ՀՀ պաշտպանության նախարարություն  
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԲԻՆ  
Ե. ՅՈՒՅԱՆ

ՎԻՃԱԿՈՎ  
«ՓՈՒԼՆՈՒՅՑ ԳՐՈՒՄ» ՓԲԸ  
Տնօրեն  
Բ. ԳԱՄԱՐՅԱՆ

Հ/հ	Ընթացիկ միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները	Ավտոմեքենաներ
		ՈՒԱԶ-315195 ինժ. և մոդիֆիկացյալները
		Մեկ միավորի գինը ՀՀ դրամ
1	Բռնկման համակարգի ստուգում	անվճար
2	Կցորդման համակարգի ստուգում	անվճար
3	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	անվճար
4	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	-
5	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	անվճար
6	ABS համակարգի ստուգում	-
7	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	անվճար
8	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	անվճար
9	Շարժիչի հանում և տեղադրում	40000
10	Շարժիչի քանդում արտաավորում և հավաքում	65000
11	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	65000
12	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	40000
13	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	30000
14	Շարժիչի գլխիկի փակյալների փոխարինում հղկումով	20000
15	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	5500
16	Շարժիչի փակյալների զսպանակների փոխարինում	550
17	Փակյալների խցուկների փոխարինում 1 կ-տ	35000
18	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	30000
19	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	65000
20	Ծնկաձև լիսեռի հղկում	12000
21	Ծնկաձև լիսեռի փոխարինում	16500
22	Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	11000
23	Ծնկաձև լիսեռի ատամնասևիվի փոխարինում	1100
24	Ծնկաձև լիսեռի ռոդում	16500
25	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	6000
26	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	15000
27	Շարժիչի բյուրի փոխարինում	44000
28	Շարժիչի գլանի փոխարինում 1 հատ	11000
29	Շարժիչի բյուրի հղկում	44000
30	Մխոցի փոխարինում 1 հատ	11000
31	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	18000
32	Բաշխիչ լիսեռի ակառնցների հանում և տեղադրում կամ փոխարինում	15000
33	Բաշխիչ լիսեռի խտարունակի փոխարինում	0
34	Փոկանիվի փոխարինում	6000
35	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	0
36	Շարժիչի շրթալի փոխարինում	35000
37	Յուղի մղիչի շրթալի փոխարինում	-
38	Շարժիչի վանոսների փոխարինում	-
39	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	6000
40	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով	5500
41	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	3000
42	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	6600
43	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	1100
44	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	6000
45	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	1100
46	Շարժիչի յուղի ռադիատորի փոխարինում	4000
47	Շարժիչի յուղի մղիչի կարգավորում	-
48	Յուղի մղիչի թաթիկի փոխարինում	-
49	Յուղի ծորակի փոխարինում	4000
50	Օդաքաշակ փողրակի փոխարինում	1100
51	Շարժիչի կոմպրեսորի փոխարինում (տուրբոմղիչ)	-
52	Շարժիչի վառելիքի քարձր ճնշման մղիչի փոխարինում	-
53	Շարժիչի քարձիկի հանում և տեղադրում կամ փոխարինում	-
54	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
55	Ուղղորդիչ վառանների փոխարինում	-
56	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	2200
57	Թափանիվի առանցքակալի փոխարինում	2000
58	Շարժիչի կափուրի փոխարինում	2200
59	Շարժիչի կափուրի միջադիրի փոխարինում	2200
60	Կափուրների հղկում	1500
61	Կափուրի բնիկի նորոգում /զնեցրո/	6000
62	Մխոցամատի փոխարինում	-
63	Շարժիչի շարժաթևի փոխարինում	2200
64	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ	11000
65	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	-

66	Բաշխիչ լիսեռի նորոգում /վառմի տեղադրում/	30000
67	Ատամնանվի փոխարինում	1100
68	Ատամնանվի փոխի փոխարինում	0
69	Ատամնավոր փոխի պատրանի փոխարինում	0
70	Սուխարիկ փոխարինում	3000
71	Շարժիչի կայունի փոխարինում	-
72	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	5500
73	Շարժիչի փոխի հեղուակի փոխարինում	4000
74	Շարժիչի հեղուակի առանցքակարի փոխարինում	2000
75	Շարժիչի առջևի կախարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	11000
76	Շարժիչի լուղի արանքաչափիչի (ուրո) իրանի փոխարինում	1100
77	Շարժիչի փոխի ճգիչի փոխարինում	5000
78	Շարժիչի փոխի ճգիչի նորոգում	1000
79	Շարժիչի գամասեղի փոխարինում	1500
80	Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով	2000
81	Գլխիկի հեղուակի փոխարինում	1100
82	Ծնկածև լիսեռի հեղուակի փոխարինում	1100
83	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	2200
84	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	5500
85	Շարժիչի քիմիական լվացում	6000
86	Ծնկածև լիսեռի կարգավորող տավորակի տեղի նորոգում	5000
87	Պարագլու լիսեռի հղկում և վառմի տեղադրում	10000
88	Շրջանակի ուղղում, նորոգում	50000
89	Յուղի և լուղի գտիչի փոխարինում	1200
90	Ավտոմեքենա յի ուղղում	1200
91	Համակարգչային ախտորոշում, քերութունների վերացմամբ	5000
92	Յուղի ռադիատորի փոխարինում	3000
93	Յուղի ռադիատորի նորոգում	3000
94	Յուղի գտիչի փակամի փոխարինում	-
95	Արտածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	-
96	Ներածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	-
97	Արտածման կալեկտորի միջադիրի փոխարինում	-
98	Ներածման կալեկտորի միջադիրի փոխարինում	-
99	Վառելիքի փողրակի փոխարինում	-
100	Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ	1700
101	Վառելիքի նորը մաքրման գտիչի փոխարինում	700
102	Օդի գտիչի փոխարինում	700
103	Կոնդիցիտների գտիչի փոխարինում	-
104	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	1700
105	Օդի ծախսաչափիչի փողրակի հանում և տեղադրում	700
106	Օդի գտիչի փողրակի հանում և տեղադրում	500
107	Օդագտիչի իրանի փոխարինում	2000
108	Օդաբաշի փողրակի հանում և տեղադրում	-
109	Ավտոմատ փոխանցման տուփի դեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	-
110	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում 1 կ-տ	10000
111	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	10000
112	Բոցամուղի կողավորում	1000
113	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	10000
114	Բենզամոդիչի փոխարինում	10000
115	Վառելիքի կոշտ մաքրման գտիչի փոխարինում	10000
116	Վառելիքի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	2500
117	Բռնկման կարգավորում	2500
118	CO կարգավորում	-
119	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	2500
120	Ղեկավարման բլոկի վերանորոգում	20000
121	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	6000
122	Վառելիքի բաքի մաքրում	3000
123	Արագարարի ոտակի փոխարինում	-
124	Արագարարի ոտակի տվիչի փոխարինում	-
125	Օդի ծախսի տվիչի փոխարինում	1700
126	Տրամյուրի հանում և տեղադրում կամ փոխարինում	-
127	Տրամյուրի վերանորոգում	-
128	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	2000
129	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	2000
130	Բենզոբաքի բենզամոդիչի ցանցի փոխարինում	10000
131	Բենզոբաքի բենզամոդիչի ցանցի մաքրում	500
132	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	2000
133	Տվիչի փոխարինում	1100
134	Ալիսիատորի փոխարինում կամ նորոգում	3000
135	Հովհարի փոխարինում	3300
136	Հովհարի փոխի հանում և տեղադրում կամ փոխարինում	4000

137	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	8000
138	Ռադիատորի շրջանակի փոխարինում	-
139	Ռադիատորի նորոգում	10000
140	Շերտափեղկի փոխարինում	3000
141	Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում	3000
142	Ջեռուցիչի իրանի փոխարինում	12000
143	Ռադիատորի կայունակի փոխարինում	-
144	Ռադիատորի փողարակի փոխարինում	-
145	Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում կամ փոխարինում	-
146	Կոնդիցիոների կայունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	-
147	Կոնդիցիոների առանցքակալի փոխարինում	-
148	Կոնդիցիոների ռադիատորի փոխարինում	-
149	Կոնդիցիոների ռադիատորի նորոգում	-
150	Կոնդիցիոների կոմպրեսորի նորոգում	-
151	Ընդարձակող բաքի փոխարինում	1700
152	Ընդարձակող բաքի փողարակի փոխարինում	1700
153	Ջրի ծորակի փոխարինում	2500
154	Հովացման հիդրոկցորդի փոխարինում	-
155	Հովացման համակարգի ռետինե փողարակի փոխարինում	2000
156	Հովարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
157	Հովարի բևանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	-
158	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	12000
159	Վառարանի ռադիատորի նորոգում	3000
160	Վառարանի շարժիչի փոխարինում	12000
161	Թերմոստատի փոխարինում	3000
162	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	10000
163	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	1100
164	Գեներատորի փոխի փոխարինում	4000
165	Գեներատորի փոխի ձգող հոլովակի փոխարինում	4000
166	Ջրի ռադիատորի վերանորոգում	10000
167	Թերմոստատի միջադիրի փոխարինում	3000
168	Սառեզման համակարգի օրահանում	-
169	Դիֆուզորի փոխարինում	10000
170	Խլարարի գոֆրալի փոխարինում	-
171	Կատալիզատորի հանում	-
172	Խլարարի կատալիզատորի տվիչի փոխարինում	-
173	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	3500
174	Խլարարի I հատ հողովակի փոխարինում	3500
175	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում	1000
176	Խլարարի ներդիրի փոխարինում	1500
177	Խլարարի կախոցի փոխարինում	1000
178	Կայունակի փոխարինում	-
179	Ռեզոնատորի փոխարինում	-
180	Հովացման հեղուկի փոխարինում	3000
181	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000
182	Աշխատանքային կամ գլխ. գլանի հիմնական նորոգում ներառյալ աշխատանքները	1500
183	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	35000
184	Կցորդման ռոտակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000
185	Կցորդման ճապակի հանում և տեղադրում կամ փոխարինում	-
186	Կցորդման ռոտակի կարգավորում	1500
187	Կցորդման ռոտակի կարգավորիչ տավորակների փոխարինում	3000
188	Կցորդման փողարակի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000
189	Կցորդման երեխանի փոխարինում	2000
190	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	35000
191	ՓՏ-ի հավաքածույի փոխարինում	5500
192	ՓՏ-ի փոխարինում	-
193	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	2200
194	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	-
195	ՓՏ-ի համաժամիչի փոխարինում	-
196	ՓՏ-ի և ԱՓՏ-ի հանում և տեղադրում	12000
197	ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում	12000
198	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում կամ փոխարինում	5500
199	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	3300
200	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	5500
201	ՓՏ-ի առամեանիվի փոխարինում	3300
202	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	5500
203	ՓՏ-ի առաջնային լիսեռի առանցքակալի փոխարինում	5500
204	Կցորդման եղանի փոշեթիկնոցի փոխար.	2000
205	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	5500
206	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	3300
207	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	3300
208	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	3000
209	ՓՏ-ի յուղի փոխարինում	1500

210	Կցորդման կարգավորում	1500
211	Փոխանցումը կարգավորող ծողի փոխար.	3000
212	Վագրաչափի շարժաքերի փոխարինում	-
213	ԱՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	-
214	ԱՓՏ-ի հավաքածուի փոխարինում	-
215	ԱՓՏ-ի փոխարինում	-
216	ԱՓՏ-ի ատամնամիջի փոխարինում	-
217	ԱՓՏ-ի կոնվերտերի համում և տեղադրում կամ փոխարինում	-
218	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	-
219	ԱՓՏ-ի կցորդման գլխավոր գլանի կայունակի փոխարինում	-
220	ԱՓՏ-ի սայլեռիքների փոխարինում	-
221	ԱՓՏ-ի համակարգչի և սայլեռիքների փոխարինում	-
222	ԱՓՏ-ի լուղի մոլի փոխարինում	-
223	ԱՓՏ-ի լուղի մոլիի խտաբուկերի փոխարինում	-
224	ԱՓՏ-ի ռադիատորի նորոգում	-
225	ԱՓՏ-ի ռադիատորի փոխարինում	-
226	ԱՓՏ-ի հիդրոագույցի փոխարինում	-
227	ԱՓՏ-ի լուղի գոլիի փոխարինում	-
228	ԱՓՏ-ի լուղի փոխարինում	-
229	ԱՓՏ-ի գոլիի վնասում, մաքրում՝ քարտերի հանում և տեղադրումով	-
230	Բաշխի սուսիի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	35000
231	Բաշխի սուսիի հանում և տեղադրում կամ փոխարինում	11000
232	Բաշխի սուսիի քանդում և արատավորում, հավաքում	12000
233	Բաշխի սուսիի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	5500
234	Բաշխի սուսիի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	5500
235	Բաշխի սուսիի դիաֆրագմաների փոխարինում	-
236	Բաշխի սուսիի շարժաքերի փոխարինում	-
237	Բաշխի սուսիի դիֆերենցիալի փոխարինում	5500
238	Բաշխի սուսիի միջակա լիսեռի փոխարինում	3300
239	Բաշխի սուսիի առաջնային լիսեռի փոխարինում	3300
240	Բաշխի սուսիի երկրորդի փոխարինում	3300
241	Բաշխի սուսիի բարձիկի փոխարինում	3500
242	Բաշխի սուսիի խտաբուկի փոխարինում	3300
243	Բաշխի սուսիի առանցքակալի փոխարինում	3300
244	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	2500
245	Կարդանային լիսեռի խառնակի փոխարինում	2500
246	Բաշխի սուսիի կայունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	4000
247	Տվիչի փոխարինում	-
248	Բաշխի լիսեռի ատամնամիջի փոխարինում	5000
249	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	-
250	Կարդանի հեղույսի փոխարինում	1500
251	ԲՏ-ի ելուտի փոխարինում /Ֆլանեց/	3300
252	ԲՏ-ի արգելակման թմբուկի փոխարինում	3300
253	ԲՏ-ի արգելակման թմբուկի կոնդակների փոխարինում	5500
254	ԲՏ-ի արգելակման թմբուկի կոնդակների կարգավորում	1500
255	ԲՏ-ի արգելակման աշխատանքային գլանի փոխարինում	3300
256	Բաշխի սուսիի շրթայի փոխարինում	-
257	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	27500
258	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր)քանդում, արատավորում և հավաքում	12000
259	Առջևի կամրջակի շրջադարձի բռունցքի փոխարինում	8000
260	Առջևի կամրջակի շրջադարձի գնդաձև հենակի փոխարինում	18000
261	Տանող կցաշուրթի փոխարինում	4000
262	Սատելիտների հավաքման իրամի և սոնիի փոխարինում	5500
263	Առջևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում կամ փոխարինում	6000
264	Առջևի կամրջակի կիսաստնու առանցքակալի փոխարինում	-
265	Առջևի կամրջակի կիսաստնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	2200
266	Կամրջակի լուղի փոխարինում	1100
267	Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	8800
268	Առջևի կամրջակի բլուկավորման համակարգի նորոգում	-
269	Առջևի կամրջակի սովիի փոխարինում	-
270	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	3300
271	Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	16500
272	Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում	33000
273	Հետևի կամրջակի մասնակի քանդում, արատավորում և հավաքում	-
274	Հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում կամ փոխարինում	2500
275	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի փոխարինում	3000
276	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	3000
277	Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	-
278	Առջևի կիսաստնուները միացնող ագույցի փոխարինում	5000
279	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	5500

280	Հետևի կամրջակի բյուջավորման համակարգի նորոգում	-
281	Կամրջակի ավիչի փոխարինում	-
282	Կամրջակի իրանի փոխարինում (շլոկ)	-
283	Կամրջակի լուղի փոխարինում	-
284	Տրավերսի համում և տեղադրում կամ փոխարինում	-
285	Չախ կամ այ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	-
286	Չախ կամ այ հողակապի նորոգում	2000
287	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	6000
288	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	3500
289	Անվակունդի գամասեղի և հեղուակի փոխարինում(մեկ անվի համար)	1200
290	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	-
291	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	-
292	Անվակունդի գամասեղի և հեղուակի փոխարինում(մեկ անվի համար)	-
293	Չախ կամ այ հողակապի խտարուկերի փոխարինում	18000
294	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	-
295	Առջևի զսպանակի փոխարինում	3500
296	Զսպանի թերթիկի փոխարինում	20000
297	Շկվորնու փոխարինում	18000
298	Ռեզրավոյի փոխարինում	18000
299	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	1500
300	Պնևոցնցամեղմիչի փոխարինում	-
301	Պնևոցնցամեղմիչի բարձիկների փոխարինում	-
302	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	1500
303	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	-
304	Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	-
305	Ներքևի լծակի հեղույսի փոխարինում	-
306	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	-
307	Անիվների պաշտպամիչի փոխարինում	-
308	Շարժիչի պաշտպանիչի փոխարինում	-
309	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	-
310	Վերևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	-
311	Վերևի լծակի հեղույսի փոխարինում	-
312	Հետևի վերևի լծակի վռանի փոխարինում 1 հատ	-
313	Չախ կամ այ հողակապի փոշեթիկնոցի փոխարինում	18000
314	Գնդե հողակապի պատլամի փոխարինում	-
315	Գնդե հողակապի փոխարինում	18000
316	Գնդե հողակապի նորոգում	-
317	Սեղմիչի ամրացման կայունակի փոխարինում	2000
318	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	1500
319	Կայունարարի կայունակի փոխարինում	1500
320	Առջևի կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	-
321	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	-
322	Առջևի կայունարարի կայունակի փոխարինում	-
323	Առջևի կայունարարի կանգնակի փոխարինում	-
324	Հետևի կայունարարի անվաբազրի կարգավորում	-
325	Հետևի կայունարարի վռանների փոխարինում 1 հատ	-
326	Հետևի կայունարարի կանգնակի փոխարինում	-
327	Հետևի կայունարարի կայունակի փոխարինում	-
328	Հետևի զսպանակների փոխարինում	-
329	Հետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	-
330	Հետևի ամկյունազալին լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	-
331	Զսպանի փոխարինում	6000
332	Զսպանի վռանների փոխարինում 1 հատ	3000
333	Զսպանի մետաղակամ վռանների փոխարինում	3000
334	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	1500
335	Հետևի հարվածամեղմիչի վռանների փոխարինում	1500
336	Զսպանի ակամջողի փոխարինում	2000
337	Զսպանի ակամջողի հեղույսի փոխարինում	2000
338	Զսպանակի մեկուսացնող ռետինե միջադիրի փոխարինում	5000
339	Անվակունդի առանցքակալների բազակի կարգավորում	2000
340	Հետևի կայունարարի սայլեմտ-քոնի սպասարկում	-
341	Անկյունազածալին լծակի վռանների փոխարինում	-
342	Ղեկասյունակի(колонка) հիմնակամ նորոգում, մեքառայալ բոլոր աշխատանքները	18000
343	Ղեկասյունակի(колонка) արորիկի փոխարինում	18000
344	Ղեկասյունակի (колонка) առանցքալին սոնու փոխարինում	18000
345	Ղեկասյունակի(колонка) խաչուկի փոխարինում	6000
346	Ղեկասյունակի(колонка) վերանորոգման հավաքածույի փոխարինում	18000
347	Ղեկասյունակի(колонка) քանդում, արառավորում, հավաքում	18000
348	Ղեկասյունակի(колонка) կարգավորում	1500
349	Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում	2000
350	Ղեկային մեխանիզմի ժապավենի փոխարինում	-
351	Ղեկային մեխանիզմի փոխակերպիչների հավաքածույի փոխարինում	-
352	Ղեկային մեխանիզմի փոխակերպիչների հավաքածույի նորոգում	-

353	Ղեկապումնակի պատասխնի փոխարինում	18000
354	Ղեկալին մեխանիզմի փակվածքի փոխարինում	6000
355	Ղեկալին մեխանիզմի փակվածքի և հակաառևանգման մեխանիզմի փոխարինում	-
356	Ղեկալին մեխանիզմի ղեկապումնակի ամրացման անոտի փոխարինում	2000
357	Ղեկալին ձողի առանցքակալի փոխարինում	10000
358	Ղեկալին կարունի ձգանների փոխարինում	1800
359	Ղեկալին կարունի միջին ձգանի փոխարինում	2500
360	ՂԿ-ի առանցքակալի կամ վռանների փոխարինում	18000
361	Ճոճանակային լծակի համուճ և տեղադրում կամ փոխարինում	-
362	Ղեկի էլեկտրական կարգավորիչի փոխարինում	-
363	Ղեկալին ճոճանակի նորոգման լրակազմի փոխարինում	-
364	ՂԿ-ի հողակալների համուճ և տեղադրում կամ փոխարինում	2500
365	Հիդրոուժեղարարի մոդիլի փոխարինում	6000
366	Հիդրոուժեղարարի մոդիլի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	6000
